

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԹՎԱԿԱՆԱԿՐ

Եղեռնին նախորդած տարիներին Տրապիդունի նահանգում բնակվող հայերի թվաքանակի մասին հրատարակված պաշտոնական ու ոչ պաշտոնական աղյուրների տվյալները շափաղանց հակասական են: Այսպես, 1900 թ. մարդահամարի տվյալներով Տրապիդոնի վիճակին բնակչությունը բնակվում էր մոտավորապես 1.200.000 մարդ, որոնցից թուրքեր ու լազեր՝ 690 հազար, հույն քրիստոնյաներ՝ 200 հազար, կրոնափոխ հույներ՝ 100 հազար, օսմանյաներ՝ 30 հազար, շերքեղներ, լեռնցիներ և վրացիներ՝ 30 հազար, խալդեր՝ 30 հազար, կրոնափոխ հայեր՝ 60 հազար, հայ քրիստոնյաներ՝ 60 հազար⁶⁷: 1908 թ. թուրքական Սալնամեի (տարեցույց, մարդահամար) համաձայն, Տրապիդոնի նահանգն ուներ 1.387.164 բնակիչ, որից 1.114.014-ը՝ թուրքեր, 222.309-ը՝ հույներ ու 46.789-ը՝ հայեր⁶⁸: Հ. Խանջյանը «Աշխարհագրություն» օսմանյան կայսրության դասագրքում 1912-ին նահանգի բնակչության քանակը ցույց է տալիս 950.000, առանց աղջային բաժանումների⁶⁹: Սույն ժամանակաշրջանի համար Գ. Մանուկունին նշում է, որ Տրապիդոնի նահանգում բնակվող հայերի թիվը կազմում էր 100.000⁷⁰:

Թեղողիկի 1922 թ. «Ամենում տարեցույցում» ասված է. «Եղեռնից առաջ Տրապիդոնի նահանգում հաշվվում էր 65.000 հայ, որոնցից եղեռնից հետո վերապրեց 15.000 շունչ»⁷¹: Հայկական ՍՍՀ Ամասի (1961 թ.) տվյալներով Տրապիդոնի նահանգում 1914-ին ապրում էր 65.000 հայ: «Հուշարձայն մեծ եղեռնից դրքում կարդում ենք. «Տրապիդոնի սանշակը (ոչ թե նահանգը—Բ. թ.) կհաշվվեր շուրջ 60.000 հայ բնակչություն, որից 14 հազար կրնակվեր Տրապիդոնու: Նույն դրքում ասված է. «Սույցին աշխարհարտի նախօրյակին Սամսոն կհաշվվեր 5000 հայություն, հույներ՝ 10000, թուրքեր՝ 15000»⁷²: Լեփիսիասի արվյալներով, Տրապիդոնի նահանգում եղեռնից առաջ ապրում էր 53.000 հայ, որոնցից Տրապիդոնի գավառում՝ 32.700, Սամսոնի գավառում՝

20.300⁷³: Տրապիդոն քաղաքում եղեռնի նախօրյակին 14.000 հայ բնակիչ լինելը հասաւառում է այդ ողբալի օրերին Տրապիդոնի խոալական հյուպատոս Կոռինին. «Տրապիդոն քաղաքի 14 հազ. հայ բնակչությունն ամբողջովին ոչնչացվեց, միայն շատ քերին հաջողվեց խուստփել զարդարաբարների ճանկերից»⁷⁴: Տրապիդոն քաղաքում 14 հազար հայ բնակչություն լինելը վկայում է նաև Հանրի Թարրյուար⁷⁵:

Ակադ. Հ. Աճառյանը «Քննություն Համշենի բարբառին դրքում հաղորդում է. «... բոլոր համշենցի հայոց թիվը լինում է... շուրջ 20000 շունչ, որոնցից հայտնի չեն, թե ինչքանը կենդանի մնաց: Նույնքան կամ ավելի կարելի է զնել մահմեդական հայերին: Իսկ Կովկաս, Սև ծովի եղերքը և Կուրան զաղթած համշենդոց թիվը կլինի 60000-ից ավելի»⁷⁶:

Համշենահայերի թվաքանակի մասին հայտնած այս տվյալները առանձին պարզաբանման կարիք ունեն: Գրքի առաջարանում Հ. Աճառյանը հաղորդում է. «Համշենի բարբառը ուսումնասիրելու նպատակով 1910 թ. ամառը ես զնացի Տրապիդոն, ուր մնացի երկու շաբաթ: Այնտեղ ես շրջապատվեցա Մտլացի, Ապինցի, Կյուշանացի (իմ հայրենի գյուղը—Բ. թ.) և ծոշտրացի գյուղացիներից և ուսուցիչներից... 34 տարի անց երեսում առիթ ունեցած ծանոթանալու բժշկական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանող Արտաշես Էքուուզյանի հետո... [որը] շատ լավ դիտեր և խոսում էր Համշենի բարբառը Կիսատ ու թերի թողած աշխատությունն ձեռնարկեցի լրացնել և ընդարձակել...»: Խաղմագաստակ դիանականի գըլխավոր նպատակը եղել է Համշենահայ բարբառն ուսումնասիրելը: Վիճակագրական հարցերով նա հեաաքը բարերկեց է ըսա հնարավորության: Գըլքում «Կոպառածներից առաջ» ընդհանուր խորադրուակ հեղինակը թվարկում է Տրապիդոնի նահանգի հայկական բնակավայրերն ու բնակչության թվաքանակի մասին հավաքած տվյալները:

Միծ դիտնականն իր վիճական բեղուն աշխատանքին զուգահեռ հավաքել է Տրապիդոնի նահանգի գյուղերի (որոնք համույթա ամրողաւ-

⁶⁷ ՏԼ՛ Ա. Թուլացյան, Օրերու հետ, Պերու, 1963, էջ 280:

⁶⁸ ՏԼ՛ Արշակոնի (Հ. Հովակիմյան), Պատմություն հայկական Պոնառի, էջ 27:

⁶⁹ ՏԼ՛ Հ. Խանճյան, հշվ. աշխ., էջ 34:

⁷⁰ ՏԼ՛ Գ. Մանուկունի, Ռուբ բարեկամ, Տիգիս, 1912, էջ 830—831:

⁷¹ Թիովիլի, Ամենում տարեցույցը, 1922, էջ 262:

⁷² «Հաւամասայան Մեծ Լոկներ», Բերութ, 1965, էջ 465:

⁷³ ՏԼ՛ «Գеноцид армян в Османской империи», Сборник документов и материалов, под ред. проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966, էջ 404:

⁷⁴ ՏԼ՛ Ջ. Աթրակայան, Առաջին համաշխարհային պահերազմն ու արմատհայությունը, 1965, էջ 301:

⁷⁵ ՏԼ՛ ««Գеноцид армян...», էջ 404:

⁷⁶ Հ. Սահայան, Թիություն Համշենի բարբառի, Երևան, 1917, էջ 3:

թյամքը համշենահայ էին) ու քաղաքների բնակիչների վերաբերյալ արժեքավոր տեղեկությունները: Սակայն այդ վիճակագրական տվյալները, ցավոք, բավականին թերի են:

Պատահական չէ, որ հեղինակը, նշելով պատերազմից առաջ նահանգում 20.000 համշենահայ լինելու մասին, ոչինչ չի ասում քաղաքներում ապրող հայերի մասին, իսկ մի շարք քաղաքների մասին տվյալներ ըոլորովին չի աալիս, ինչպես Սամսոնն ու Բաֆրան, իսկ Գյումուշխանե քաղաքն ու ամրող գավառը ըոլորովին բաց է թողել: Ինչ վերաբերում է համշենահայերի թվաքանակին՝ 20.000 շունչ, ապա գանույնպես մոտավոր չ, քանի որ Օրբու գավառակի գյուղերի հայ բնակիչների քանակի մասին տեղեկություններ չկան, իսկ այլ շրջանների վերաբերյալ նրան հադորգված աեղեկությունները նույնպես թերի են: Ամեն զրուցակից տվել է այն, ինչ կարողացել է, ինչ որ գիտեր կամ լսել եր:



14. Հովակիմ Մովսեսի Հովակիմյան, «Պատմություն հայկան Պոնտոսի» աշխատության հեղինակ (ծնն. 1894 թ.),

Համեմատաբար ստույդ են Տրտափիլոնի մոռակա գյուղերի մասին հադորգված տվյալները: Եվ դա ինքնուսակինքան հասկանալի է: Նախ՝ որ հեղինակը անձամբ եղել է այդ վայրերում: Երբորդ՝ նա լայն հնարավորություն է ունեցել երկար գրուցելու աեղի ուսուցիչների հետ, հատկապես՝ Յոմուրայի ու Սյուրմենեի: Իսկ ով քիչ թե շատ ժանոթ է այդ վայրերին, նրան հայտնի է: որ Յոմուրայի համարյա ըոլոր գյուղերն ապահովված էին ձեռնհաս ու նվիրված դասատուններով: Շրջանի ուսուցչական միությունն ուներ «Գեղջակ» անունով խմորատիպ, առա տպաղեր հանդեսր:

Ա. Մոցիկյանը հաղորդում է. «Հայեր Տրտ-

պիլոնի մեջ ավելի քան 15.000 կհաշվվեին մինչև 1915 թ. սկիզբը»:

Սամսոնի հայկական գպրոցի ուսուցիչը վ. Սինախորյանի հաշվումներով, եղեռնի նախօրյակին Սամսոն քաղաքում բնակվում էր 800—900 լուտանիք՝ 8.000 շունչ հայք:

Սամսոնցի 0թոն Հեքիմյանը ռատմասոնի հայոթյան ախուր բաժինը 1915—1918 մեծ եղեռնին դրբում Սամսոն քաղաքի հայերի թիվը ցույց է աալիս 6.000 անձ:

Թվելով նախաեղեռնյան ժամանտկամիջուցում Տրտափիլոնի նահանգում բնակվող հայ բնակչության վիճակագրության վերաբերյալ հակասական ու շատ անդամ իրաբամերժ տեղեկությունները, հարց է ծագում, թե, արդյոք, որակե՞ղ է թադկած այդ իւանաշփոթության արմատը:

Վիճակագրական այդպիսի խճճվածության գլխավոր պատճառները, հավանարար, հեաետնք են հետեւյալ հանդամտնքների:

Տվյալներ հաղորդող հեղինակներից ոչ մեկը չի հիշատակում հայ կաթողիկ ու ըոլորգական համայնքների թվաքանակը, իսկ այգպիսիք Տրտափիլոնի նահանգում, հատկապի քաղաքներում (Տրտափիլոն, Օրբու, Սամսոն) դպտի թիվ էին կաղմում: Այդ վայրերում նրանք ունեին ինքնուրույն աղդային մարմիններ, կրոնական հովվապետներ, եկեղեցի, ծողովարան, ուսումնարաններ: Նրանք ուղղակի ենթակա ու հաշվետու էին իրենց վերադաս մարմիններին, թերևս աղդային այս հատվածները որոշ հեղինակներ գուրս են թողել լնդհանուր վիճակադրությունից:

Շատ հեղինակներ Տրտափիլոնի նահանգի մասին խոսելիս բոլորովին չեն հիշատակում Գյումուշխանե քաղաքում ու գավառում բնակվող հայերի թվաքանակը: Մինչդեռ այդ զավար Տրտափիլոնի նահանգի անրաժան մասն էր: Ոչինչ չի ասվել նաև կաղիստանում (ներկայիս՝ Ռիդեի նահանգ) բնակվող փոքրաթիվ հայերի վերաբերյալ: Ասվածը վերաբերում է նաև թեղողիկի վիճակապահական թվերին:

Տրտափիլոնի նահանգը բաժանվել էր երկու ինքնուրույն առաջնորդական թեմերի՝ Ճանիկի ու Տրտափիլոնի: Վերջինիս մեջ մտնում էին Տրտափիլոնի, Գյումուշխանների ու Լագիստանի գավառներ: Քանի որ Տրտափիլոնի թեմի առաջնորդը նրանում էր կուսակալանիստ Տրտափիլոն քաղաքում, ապա բացառված չէ, որ Տրտափիլոնի առաջնորդարանի կաղմած (առանց Ճանիկի թեմի) վիճակապահական թվերին:

Պ. Սողիկյան, Արեմտահայ աշխարհ, նյաւ-Ֆոր, 1947:

Պ. Արեմակյան, 1915 Ամականու Արհամիլիրի օրեր, Վենետիկ, 1949:

դրական տվյալները առանձին օտար (Շերես նաև ապօպացին) հեղինակների կողմից բնդումված լինեն որպես ուրաց նոհանգում բնակլող հաւերի թիվունուր թվաբանակը:

Օտար հեղինակների սեծանասնությունը, հասկանութիւնը, իրքն սկզբնաղրյուր է ընդունել թուրքական պետության կողմից հայտարարված խեղաթյուրված տվյալները:

Չի կարելի անտեսել նաև այն պարագան, որ Թուրքիայում հայերին (նաև հույներին) սրբես խորթ տարր բանակ չէին տանում (մինչև 1908-ի հեղաշրջումը), Դրա փոխարեն արական սեոփա (ծնված օրվանից) դինուրական տուրք էր դանձվում, ուստի հաճախ հայերը խուսափում էին տղաների թիվը ճիշտ ցույց տալուց:

Ուշադրավ է Պ. Թումայանի 1870-ական թթ. Կ. Պոլսո պատրիարքին (Խրիմյան Հայրիկին) ներկայացրած տեղեկագրում Պոնտոսի հայ բնակչության մասին հաղորդումը.

«Գյուղերու եկեղեցիք և բնակիչք... որքան որ այս դյուղերու եկեղեցվոց թիվը հայտնի է, այնքան անհայտ է անոնց ժողովրդյան թիվը և ասիկա, ինչոքս փորձով գիտեմ, միայն այս վիճակի համար չէ. սակայն այս դյուղերն՝ ինչպես նաև ձանիկի վիճակն ալ պոնտական և ձանիկի լերանց շղթաներու գժվարուտ վայրերը բագմօրյա ճանապարհներ ցան ու ցիր սփոված և օտարի մը անձամբ շրջել ու առանձին տնակները հաշվելը կարի գժվարին ու անհնարին ըլլալով՝ մանավանդ այլ և այլ նկատմամբ ժողովուրդն ալ ինք զինք ճամփորդները և քննիլ հետաքրքիրները ծածկելու մեծ խնամք ու փույթ ունենալով՝ գրեթե միշտ անորոշ և անսառույգ մթության մը մեջ ծածկված մնալ հաջողած է. մանավանդ առաջնորդաց ցուցակներ շատերու անունը խուսափած է՝ պտղիներու օրը ըստ օրե բարձրանալուն պատճտով, շատեմ փոխարեն բարյալտես օգուտ մ'ալ շքաղելուն պատճառով. շինական քահանայք և իշխանք ալ իրենց շահը հոգալով ժողովրդյան այս գործին օգնական՝ մանավանդ թի հեղինակ են, հիմա թող ազգը օրինավոր հաշիվ գտնաւ ինչ կարելի է ըսախն՝ քանի որ աշխարհադիր ընելի ժողովուրդը կսոսկա և ծածկվելով կկարծե, թե ալագային մեջ զսրք և ուրիշ ծանր տուրքեր տալիք պիտի աղատվի: Ուստի հիմա մեր հայտնած թվերը՝ միայն առաջնորդաց ծանոթները, որով և միշտ հարյուրին քառասուն նվազ պիտի ըլլանա⁷⁹:

Վերջապես որտե՞ղ է ճշմարսությունը՝ ո՞ր տվյալն է իրականությանը մոա, ինչքա՞ն հայ էր բնակվում Տրապիդոնի նահանգում եղեռնից

առաջ: Մանգակունու 1912-ին հայտարարած 100.000-ը, թև Թիոգիկի 1922-ին հայտարարած է 5.000-ը: Կարսին թվերը, և համեմանի խոսքերով ասած՝ շառ ի զգոյն ավելի ստույգ տվյալների, առայժմ ստացել են կիսապաշտոնական օրինականություն:

Այդ հարցին հավանական ու ձևարտամուտ պատասխան կարող են տալ միայն նույն բնակվաշյուրից գաղթած ու փախած համշենահայերն ու պոնտահայերը:

Եղեանից առաջ ու հետո, Տրապիդոնի նահանգի համարյա բոլոր բաղաքներից, շրջաններից, պյուղերից ու մերձակա գավառներից Ռուսաստանում ու ապա ՍՍՀՄ գաղթած բազմաթիվ համշենահայերի ու, առհասարակ, պոնտահայերի գրավոր ու բանավոր վկայությունների համաձայն, եղեռնի նախօրյակին այստեղ՝ Տրապիդոնի նահանգում ու հարեան շրջաններում բնակվող քրիստոնյա հայերի բնակավայրերն ու բնակչության թվաքանակը հետեւյալ պաակերն էին ներկայացնում (աես աղյուսակ 1 և 2):

Բացի հիշված նահանգներից, համշենահայերը բնակվում էին նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրերում: Հայկումու մկայությամբ, Սև գետի արյունալի օրերին, հայրենի օջախները լքած ու հեռացած սեգետցիների շուրջ 10%-ը անցել է թարերի կողմբ: Սակայն առայժմ ստույգ տեղեկություններ չկան, թե որտեղ են նրանք հիմներվել: Հավասար վկայություն կա միայն այն մասին, որ, սյուրմենեցիների մի սերունդ հասել է Գանձակի (Կիրովարագ) գավառ, որոնց հետնորդներին մինչև այսօր էլ սյուրմենեցի են կոչում:

* * *

Ամփոփելով Տրապիդոնի և նրան հարեան նահանգներում եղեւնից առաջ համշենահայության բնակավայրերի ու բնակչության թվաքանակի վերը բերված հնարավոր ու մեզ հայտնի տեղեկությունները, կստանանք հետեւյալ պատկերը: Տրապիդոնի նահանգի 16 բաղաքներում ապրում էր ավելի քան 38.720 քրիստոնյա հայ. մեծ մասամբ զուտ հայարնակ շուրջ 293 գյուղի 9.304 տնտեսություններում՝ 65.342 համշենահայ: Նահանգի գյուղերում ու քաղաքներում, միասին վերցրած, բնակվում էր շուրջ 106.172 համշենահայ: Հարեան Սինոպի գավառում և Նիկոմեդիայի (Խլմիթ) ու Սերաստիայի նահանգներում ապրում էր շուրջ 16.339 համշենահայ: Ի մի բերելով Սև ծովի հարավային ափե-

⁷⁹ «Հուման», 1889, № 2, էջ 183:

80 և հայկական, էշեր համշենահայ պատմությունից, էջ 141:

րին՝ Հորոխի գևառերանից սինչև Մարմարա ծովի ափերը (Եթկոմեղիալի համանգ) սիոված քրիստոնյա համշենայության թվաբանակը, կարսի է ասել, սր այդ երկրաժամկի 17 քաղաքներում ու ավաններում և շուրջ 322 դպուղերում ապրում էր ափելի քան 122.681 հայ, որոնց գեղազանց մեծամասւթյունը համշենահայ էր:

Ավելացնենք, որ բերված այս թվերի մեջ չեն մանում գեռես *XVIII—XIX* դդ. սկսած, յաթաղանի սպառնալիքի առակ, իսլամի «սոուրր» դավա-

նանքը բոնությամբ «ընդունած» գրեթե նույնարանակ համշենահայության այն սերունդները, որոնք սփոված էին նշված երկրամասում և որոնք առավել կամ նշվագ չափով պահպանել էին հայ ազգային սովորություններն ու քրիստոնեական կրոնի վերապրուկները:

Անտարակույս, նշված վիճակագրական տըգյալները համարելով նվազագույնը ե թնավ ոչ լրիվ ու վերջնական, կարու են հետագա լրացումների ու ճշգրաման: